Արձանագրություն N 2

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից ինտերնետ /պահուստային/ կապի տրամադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-22/7 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19

16 մայիսի 2022թ.
ժամը՝ 14.15

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Մ.Մաճկալյան, Տ.Պարսիլյան, Ս.Պետրոսյան, Ա.Լալայան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Սաղաթելյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	***Չափաբաժնի անվանումը***	***Գնման հայտով սահմանված գնվելիք ծառայության գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)***
1	համացանց	700 000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 12.05.2022թ.-ին ժամը 14:15-ին:

էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 13.05.2022 թ.-ին ժամը 14:15-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն

Հ/h	Մասնակիցների անվանումները	Գործունեության հասցեն	Կապի միջոցներ	Էլ. հասցե
1	«ԱՐՓԻՆԵՏ » ՍՊԸ	ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Բաղրամյան 22/2	+37460888888	armen.muradyan@arpinet.am
2	« ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ » ՓԲԸ	ք.Աբովյան, Խաղաղության 1,	060469937	sales@rtarmenia.am
3	«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	Երևան, Ազատության 24/1,	+37499223407	corp_tender@telecomarmenia.am

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-22/7 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել

6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Հ/Հ	Մասնակից	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	«ԱՐՓԻՆԵՏ » ՍՊԸ	580000	20 %	696000	417000	20 %	500400.00	
	« ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ » ՓԲԸ	700000	20 %	840000	430000	20 %	516000.00	
	«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	7777777	20 %	9333332.4	538200	20 %	645840.00	

Աճուրդն ամփոփվել է 13.05.2022թ. և Համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել «ԱՐՓԻՆԵՏ » ՍՊԸ-ն:

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և հայտի գնահատման մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով «ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը, արձանագրեց, որ հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Հանձնաժողովը որոշեց՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ ընտրված մասնակցի և մերժված հայտերի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

16.05.2022թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշեց՝

8.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ «ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ-ին՝ հայտարարել որպես ընտրված մասնակից, իսկ Ընթացակարգի մյուս մասնակիցներ «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ » ՓԲԸ-ի և «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը մերժել:

8.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

8.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

8.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Վարդան Թորոսյան

անդամներ՝ _____ Միհրան Մաճկալյան

_____ Տիգրան Պարսիկյան

_____ Սասունիկ Պետրոսյան

_____ Անժելա Լալայան

Քարտուղար՝ _____ Հերմինե Սաղաթելյան